



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 36

ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԻԻՆՆԸ

Տէր, քու սէրդ երկինքին պէս անսահման է.
հաւատարմութիւնդ՝ մինչեւ ամպերը կը հասնի:
Արդարութիւնդ լեռներուն պէս բարձր է,
դատաստաններդ՝ ովկիանոսներուն պէս խորունկ:
Դո՛ւն է որ կը հոգաս
մարդոց թէ անասուններուն կարիքները, Տէր:
Ինչ թանկագին է հոգածութիւնդ, ո՛վ Աստուած.
բոլոր մարդիկ քու թելերուդ հովանիին կ'ապարիսին:
Քու տանարիդ առատ օրհնութիւններով կը լիացնես զանոնք,
շնորհներու քու գետէդ խմել կու տաս դուն անոնց:
Որովհետեւ դուն ես կեանքի աղբիւրը.
լոյսովդ է որ մե՛նք լոյսը կը տեսնենք:
Մշտական ըրէ հոգածութիւնդ անոնց վրայ՝ որոնք քեզ կը մանչնան,
եւ արդարութիւնդ անոնց վրայ՝ որոնք սրտով ուղիղ են:

ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրք Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Զրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ԱՐԲԱՎԱՍԻՆ ԶԱՄԱԿ ՍԸ ԽՈՍԱԿՑՈՒԵՑԱԲ (18:1-15)

Այս հատուածը հետաքրքրականօրէն ցոյց կու տայ Արեւելքի մէջ ժամանակի հշրասիրութիւնը, ոչ թէ պարտադրուած մարդոց, այլ մարդիկ իրենք կամաւոր կերպով կ'ընդառաջէին հիւրերուն: Եւ այս հատուածին մէջ կը փեսնենք թէ ինչպէս Աբրահամ ինք կը սպասարկէ հիւրերուն գիտնալով անոնց բացառիկ ըլլալը, սակայն առանց իրապէս ճանչնալու, թէ ովքեր են: Եբրայեցոց նամակը պիտի ըսէ. «Անցեալին շարեր առանց գիտնալու հրեշտակներ հիւրասիրեցին»: Յետոյ սակայն, երբ հիւրը կը սկսի խօսիլ եւ կու տայ այն նոյն խոստումները, ինչ որ Տէրը փուած էր, այն ժամանակ Աբրահամ կը հասկնայ որ կը գտնուի Տիրոջ դիմաց:

Նոյն այս հատուածը նաեւ մեզի կը ներկայացնէ Աբրահամի վիճակը թէ առանց ժամանակ կորսնցնելու կամ դանդաղելու կը հիւրասիրէ, իր լաւագոյնը հրամցնելով հիւրերուն:

Ահա այս հատուածը անգամ մը եւս կը կրկնէ այն խոստումը որ նախապէս Տէրը փուած էր Աբրահամին, թէ զաւակ մը պիտի ունենայ: Այս անգամ, սակայն, այս լուրը Սարա կը լսէ, բայց իր սրտին մէջ կը խնդայ, բոլորովին փարբեր խնդուք մը, այն ինչ որ ունէր Աբրահամը ինք, նախորդ գլխուն մէջ: Աբրահամի պարագային ուրախութեան խնդուք էր, մինչ Սարայի պարագային հեքնական: Ճիշդ այս երեւոյթին համար ալ Տէրը կը զգուշացնէ Սարային, նոյնիսկ յանդիմանական ոճով, թէ ինչո՞ւ խնդացիր: Տէրը կը զգուշացնէ երկու իմաստով. նախ իբրեւ նշան, իսկ երկրորդ՝ Տէրը կ'ուզէ որ Իր ծառաները ճշմարտութիւնը խօսին:

Այս հատուածը մեզի ցոյց կու տայ, թէ այդ երեք մարդերէն երկուքը հրեշտակներ էին, իսկ մէկ հապը Տէրը ինքն էր:

ԱՐԲԱՎԱՍԻՆ ԶՔՍԵՂԱՆՔԸ ՍՈՂՈՍԻՆ ՀԱՄԱՐ (18:16-33)

Այս հատուածին երկրորդ բաժինը, որ մեզի կը փոխանցէ հետեւեալ ճշմարտութիւնները.

1.- Աստուծոյ ծրագիրները երբեք ալ ծածուկ չեն իր ծառաներէն:

Ասոր նպատակը անոր համար, որ Աստուած իր ընելիքը եւ իր ծրագիրը միշտ ալ կանուխէն կը յայտնէ իր ծառաներուն՝ մարգարէներուն, որպէսզի անոնք ալ նոյն այդ ծրագիրը յայտնեն ժողովուրդին, որ ըստ այնմ անոնք ալ զգաստանան եւ զգուշանան:

Միւս կողմէ, հատուածը ինք կու տայ նպատակը, «որպէսզի անիկա իր զաւակներուն եւ իրմէ ետք իր փանը պատուիրէ», չէ՞ որ «անոնք պիտի ըլլան արդարութիւն, իրաւունք եւ Տիրոջ ճամբան պահողները»: Ասոր կողքին կայ նաեւ վկայութիւն փալու բնոյթը: Այդ վկայութիւնը պիտի դառնայ վստահութիւն Աստուծոյ խօսքին եւ Աստուծոյ փուած խոստումին հանդէպ: Այս բոլորէն յետոյ Աստուած Ինք կ'ուզէ Իր ծրագիրը իրագործել. «Հիմա պիտի իջնեմ փեսնելու՝ թէ բոլորովին ինձի եկած աղաղակին պէս ըրի՞ն եւ եթէ ոչ՝ գիտնամ»:

2.- Ծառաներուն բարեխօսութիւնը: Արդար մը արդեօք կրնա՞յ բարեխօսել ուրիշի մը համար: Կը կարդանք Յակոբոս Առաքեալի նամակը (5:16-18):

Եթէ լաւ կարդանք Աբրահամի խնդրանքը Սողոմ Գոմորի համար, պիտի փեսնենք որ Աստուծոյ կամքին հակառակ բան մը չէ, ընդհակառակը ԱՆոր կամքին համաձայն է, որովհետեւ Աստուած մարդուն փրկութիւնը կը կամենայ: Բայց իրողութիւնը այն է, որ այլեւս ուրիշ էլք չկայ, փրկութեան յոյս չկայ: Իբրեւ այդպիսին Աստուած այն դատաստանը, որ հետագային պիտի կ'իրարկէ՝ պատմութեան, ներկային եւ ժամանակին մէջ ցոյց կու տայ, որպէսզի իբրեւ օրինակ ծառայէ ուրիշներուն, առնուազն անդրադառնալու, զգաստանալու եւ ըստ այնմ Աստուծոյ վերադառնալու:

Ահա Աբրահամի միջամտութիւնը եւ բարեխօսութիւնը, որուն համար ալ Աստուած պատրաստ է Իր ծրագիրը փոխելու, բայց արդէն հասած է այն վիճակին, որ 10 արդար իսկ չկայ այնպէս: Իսկ Ղովարի ներկայութիւնը յիշեցում էր Սողոմի եւ Գոմորի բնակիչներուն Աստուծոյ ճանապարհին: Բայց ահա պահը կը հասնի, երբ Աստուած կ'ըսէ. «Մինչեւ Ղովարը այնպէտէն չհանեմ այդ քաղաքը պիտի չկործանեմ». Կը նշանակէ թէ այդ քաղաքը ապահով է այնքան արեւն որ Ղովարը հոն է: Նոյնը պիտի ըսէ Քրիստոս (Մարթ 24, Մարկ 13) «Եթէ Աստուած իր ըֆորեալներուն սիրոյն այդ օրերը չկարճցնէր, ոչ ոք պիտի փրկուի»: